

ՀԱՅ ՆԿԱՐԻՆՆԵՐ

Ծ Ե Ր Ո Ւ Ն Ք Ա Հ Ա Ն Ա Յ

(1355 ? - 1415 ?)

Ծնած է ժ. Դարի կիսուն հաւանաբար: Հօրը անունն էր Ստեփանոս, մօրը՝ Էլիսաթուն: Կինը կը կոչուէր Արդուն: Եղած է աշակերտ Կիրակոս եւ Յոհաննէս կրօնաւորներու եւ Գէորգ Վարդապետի: Ապրած եւ ստեղծագործած է Ոստան քաղաքին մէջ: Իր գրչական եւ մանրանկարչական աշխատանքը տեւած է շուրջ քառորդ դար (1390-1412): Ծանօթ են հետեւեալ գործերը:

1. — Նարեկ, 1390: Գրիչ եւ նկարիչ Ծերուն: Կազմող՝ Թումա: Ստացող՝ Յովհաննէս վանահայր. — Զեռ. Երեւանի, Թ. 4938:

Հստ 2. Յակոբեանի, «Ծերունի», որպէս մանրանկարիչ-ծաղկողի երեւակայութիւնը յռայլ է յատկապէս լուսանցազարդերի մէջ. իրական ու երեւակայական կենդանապատկերներ, թռչուններ (բուսամտախիւների համակցութեամբ), ճարտարապետական մանրամասներ, զարդահիւսուածքներ, իւրաքանչիւրը իւրովի տպաւորիչ ու գունազեղ» (Վասպուրականի Մանրանկարչութիւնը, Բ., էջ 56):

2. — Նարեկ, 1391ին օրինակուած Վանի մէջ, Ծերուն քահանայի աշակերտ գրիչ Թումա քահանայի ձեռքով: Նկարիչ՝ Ծերուն քահանայ: Ստացող՝ Սիմէոն կրօնաւոր. — Զեռ. Երեւանի, Թիւ 1674:

3. — 1391ին վերստին նորոգած է Աւետարան մը տառաքնականաբար եւ ցանկաբար եւ ծաղկաբար: Աւետարանի գրիչը եղած է Արիստակէս: Նորոգել տուողը՝ Սիմէոն քահանայ: Կը պարունակէ Սիմէոն քահանայի եւ անոր որդիին՝ Աստուածատուրի, ինչպէս նաեւ ծաղկող Ծերունի նկարները. — Զեռ. Երեւանի, Թիւ 8772: Յիշտ. Ժ. Դարի, Թիւ 739:

4. — Աւետարան, 1395, Ոստան: Գրիչ եւ նկարիչ՝ Ծերուն: Ստացող՝ Ոստանի կրօնաւոր. — Զեռ. Լենինգրադի:

5. — Տօնական, 1401, Ոստան: Գրիչ եւ ծաղկող՝ Ծերուն: Կազմող՝ Սարգիս:

Ստացող՝ Ստեփանոս կրօնաւոր. — Զեռ. Երեւանի, Թիւ 4670:

6. — Աւետարան, 1412, Ոստան: Գրիչ եւ նկարիչ՝ Ծերուն: Ստացող՝ Ստեփանոս քահանայ՝ որդի Սարգիս ներկարարի. — Զեռ. Երեւանի, Թիւ 4157: Յիշտ. Ժ. Դարի, Ա. Մասն, Թիւ 140:

Ծերուն քահանայ կը խնդրէ յիշել զբզկապետին իւր զփրակոս կրօնաւոր, եւ զՅովհաննէս կրօնաւոր, որ զգիրն ուսոյց, եւ զԳէորգ վարդապետն, որ զծաղկին ուսոյց» (Յիշտ. Ժ. Դարի, Ա. Մասն, Թիւ 140):

Հրավարդ Յակոբեանի գնահատումով «Ծերունը ուրոյն տեղ ապահովեց իր համար Վասպուրականի դպրոցում, թողնելով նաեւ որոշակի հետք ու հետեւորդներ» (նոյն, էջ 65):

Ժ Ե. Դ Ա Ր

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Խ Ի Զ Ա Ն Յ Ի

(1360 ? - 1420 ?)

Յովհաննէս քահանայ ծնած է ժ. Դարու երկրորդ կիսուն սկիզբները հաւանաբար: Որդին էր Մկրտիչ քահանայի (+ 1392). Աշակերտած է Դամադիէլի սուրբ ուխտին առաջնորդ Յովհաննէս եւ Կիրակոս վարդապետներուն: Յովհաննէսի գործուսէութեան շրջանը տեւած է աւելի քան քառորդ դար (1390-1417): Իր մանրանկարչական արդիւնքէն կրնանք յիշել հետեւեալները:

1. — Աստուածաշունչ, օրինակուած 1390-1400 թուականներուն, Խիզանի մէջ, Պետրոս արեղայի եւ Յովհաննէս քահանայի ձեռքով: Նկարիչ՝ Յովհաննէս Խիզանցի: Ստացող՝ Յովհաննէս րարունի. — Զեռ. Երեւանի, Թիւ 346:

2. Յակոբեանի համաձայն, այս ձեռագիրը «իւր շքեղութեամբ թերեւս եզակի նմոյշ մըն է Վասպուրականի ժ. Դարի մանրանկարչութեան մէջ: ... Իրօք այդպիսի շքեղութիւն, նուրբ ու բարձր ճաշակ մինչ այդ Վասպուրականում չի հանդիպել» (Վասպուրականի Մանրանկարչութիւնը, Բ., էջ 94):

2. — Նարեկ, շուրջ 1392 թուին: Գրիչ եւ նկարիչ՝ Յովհաննէս: Ստացող՝ Յովհան-

նէս կրօնաւոր. — Ձեռ. Երեւանի, Թ. 1675: Յիշտ. ԺԴ. Դարի, Թիւ 127:

3. — Աւետարան, Պետրոս արեղայ օրինակած է Խիզանի մէջ. 1392ին: Յովհաննէս նկարազարդած է 1394ին: Ստացող՝ Թադէոս արեղայ. — Ձեռ. Երեւանի, Թիւ 3717:

4. — Մաշտոց, 1401, Խիզան: Դրիչ եւ ծաղկող՝ Յովհաննէս: Կազմող՝ Մկրտիչ կրօնաւոր: Ստացող՝ Գրիգոր Նպս. Մովսէս. — Ձեռ. Երեւանի, Թ. 696. Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 13:

5. — Աւետարան, 1401, Խիզան: Դրիչ՝ Ջաքարիա: Մաղկող՝ Յովհաննէս. Ստացող՝ Աստուածատուր քահանայ: Կը պարունակէ ստացողին նկարը. — Ձեռ. Երեւանի, Թ. 4223: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 5:

6. — Աւետարան, 1402, Խիզան: Դրիչ եւ ծաղկող՝ Յովհաննէս քահանայ: Ստացող՝ Յովհաննէս քահանայ եւ ընտորդին՝ Սուրբառ քահանայ: Կը պարունակէ ստացողին նկարը՝ իր կնոջ եւ որդիին հետ. — Ձեռ. Երեւանի, Թ. 5562: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 19:

7. — Աւետարան, 1404, Խիզան: Դրիչ՝ Ստեփանոս քահանայ, որդի Մելքեւսի († 1404): Նկարիչ՝ Յովհաննէս: Ստացող՝ Մովսէս կուսակրօն քահանայ. — Ձեռ. Երեւանի, Թ. 5727: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 47:

8. — Աւետարան, 1417, Խիզան: Դրիչ՝ Յովհաննէս քահանայ: Ստացող՝ Ստեփանոս կրօնաւոր, որդի Յովհաննէսի. — Ձեռ. Երեւանի, Թ. 5441: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 213:

9. Յակոբեան կը գրէ. Խիզանցի Յովհաննէսի «աշխատութիւնները, իրաւամբ, համարվում են Վասպուրականեան ոճի տիպական նմոշներ եւ, ըստ էութեան, գաղաղամ այդ ոճի լաւագոյն չափանիշը» (նոյն, էջ 83):

Դ Ա Ն Ի Է Լ Ա Ղ Թ Ա Մ Ա Ր Յ Ի

(1380 ? – 1450 ?)

Մնած է 2. 1360 թուին: Որդին էր Կարապետ քահանայի եւ Դուռ–Մելիքի: Նշած է աշակերտ իր հօրեղոր՝ Ջաքարիա փիլիսոփայի, զոր կը կոչէ իր «հոգեւոր

հայրը»: Իրրեւ ստրկաւագ յիշուած է 1404ին: Ընդհանրապէս ապրած եւ գործած է Աղթամարի մէջ: Նշած է ուսուցիչ իր եղբոր՝ գրիչ Թումայ կրօնաւորին:

Դանիէլ քահանայի կենակիցը կը կոչուէր Շամսա–Հաթուն: Իրենց զաւակներէն կը յիշուին, 1441ին, Ստեփանոս կրօնաւոր, Յովհաննէս եւ Ջաքարիա:

Իր քառասնամեայ (1403–1444) գրչական եւ մանրանկարչական գործերէն ծանօթ են 9 հատ, ըստ հետեւեալին:

1. — Աւետարան, 1403: Դրիչը՝ Դանիէլ եւ հայրը Կարապետ քահանայ: Նկարազարդող՝ Ջաքարիա փիլիսոփայ: Պատուիրատու՝ Սիւրբար քահանայ. — Ձեռ. Երեւանի, Թիւ 4923:

2. — Մաշտոց, 1404: Դրիչ՝ Դանիէլ ստրկաւագ: Ստացող՝ Կիրակոս քահանայ. — Ձեռ. Երեւանի, Թիւ 4717:

3. — Տօնական, 1409: Դրիչ՝ Դանիէլ: Ստացող՝ Յովհաննէս տանուէր. — Ձեռ. Երեւանի, Թիւ 994:

4. — Ճաշոց, 1412: Դրիչ՝ Դանիէլ: Ստացողը՝ Յովհաննէս եւ Ստեփանոս. — Ձեռ. Երեւանի, Թիւ 9093:

5. — Աւետարան, 1426: Դրիչ՝ Թումայ կրօնաւոր. Մաղկող եւ կազմող՝ Դանիէլ քահանայ. — Ձեռ. Վրաց Թանգարանի, Թիւ 23:

6. — Աւետարան, 1433, Ուրանց գիւղ: Դրիչ՝ Թումայ կրօնաւոր: Մաղկող եւ կազմող՝ Դանիէլ քահանայ: Ստացող՝ Ներսէս քահանայ. — Ձեռ. Երեւանի, Թիւ 4963:

7. — Աւետարան, 1436, Աղթամար: Դրիչ, ծաղկող եւ կազմող՝ Դանիէլ քահանայ. գրչութեան մասնակցած է իր եղբայրը՝ Թումայ կրօնաւոր: Ստացող՝ Յովհաննէս տանուէր. — Ձեռ. Երեւանի, Թիւ 6543:

8. — Աւետարան, 1441: Դրիչ՝ Դանիէլ քահանայ: Նկարազարդող՝ Թումա Մինասենց. Ստացող՝ Մկրտիչ. — Ձեռ. Երեւանի, Թիւ 5515:

9. — Ճաշոց, 1444: Դրիչ՝ Դանիէլ քահանայ: Ստացող՝ Առաքել քահանայ. — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 644:

Հրավարը Յակոբեանի համաձայն «Ոչ միայն պատկերագրութեամբ, այլ նաեւ տնօրէն Դանիէլի մանրանկարները սկզբունքօրէն բան չեն աւելացնում Աղթամարի

մանրանկարչութեան մէջ: Ջնայած նա աշակերտել է շնորհալի մէկին՝ Ջորջարիային, բայց, այդու ամենայնիւ, մնում է նրանից ցածր աստիճանի վրայ» (Վասպուրականի Մանրանկարչութիւնը, Ա., էջ 100):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(1386–1455)

Աստուածատուր Եպս. Ակլայ ծնած է 1386ին: Որդին էր Աստմի (+ 1417ին կամ աւելի առաջ) եւ Շաքար խաթունի: Իր մօրեղբայրն էր Յովհաննէս Որոտնեցիի աշակերտներէն Ովսանանց Յակոբ Վարդապետը, որ նահատակուած է 1426ին:

Աստուածատուր իր ուսումը ստացած է Անձնապատի Վանքը, քեռիին մօտ, եւ հմտացած գրչութեան արուեստին՝ գրել, ծաղկել, ոսկել եւ կազմել: Ան արեղայ էր 1417ին կամ աւելի առաջ: Իր յիշատակայ (1403–1455) գրչական եւ մանրանկարչական աշխատանքի արդիւնքէն կրնաւք յիշել հետեւեալները:

1. — 1403ին, երբ տասնեւփեց տարեկան էր, Անձնապատի Վանքին մէջ օրինակած է, իր քեռիին համար, վերջին մասը Ոսկեփորիկի մը. — Ձեռ. Վիեննայի, թիւ 705: Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 414, էջ 313:

2. — Զառոց, նախ քան 1417: Ստացող՝ Արևուշահ: «Ձեռագիրը հարուստ է լուսանցազարդերով եւ բարձրորակ մեծադիր մանրանկարներով» (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 222, ծնթ.). — Ձեռ. Երեւանի, թիւ 4551:

3. — Աւետարան, 1417: Դրիչ՝ Յովհաննէս, ի Վանքն Ակոռոյ: Ծաղկող՝ Աստուածատուր արեղայ: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 215, էջ 203, ուր կարելի է տեսնել Յովհաննէս գրչի եւ ձեռագիրը ստացողներուն նկարները. — Ձեռ. Երեւանի, թիւ 4641:

4. — Աւետարան, 1419, Ս. Վարդան Անապատ, Ոստան: Ստացող՝ Մարտիրոս: Նկարները պատճենահանուած են Սարգիս Պիծակի օրինակէն (Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 227). — Ձեռ. Երեւանի, թ. 2670:

5. — 1455ին, երբ 70 տարեկան էր, Աւետարան մը գրած, ծաղկած եւ կազմած

է «ի յանառիկ դղեակն» անուէր քնշուած է: Ստացող՝ Առաքել. — Ձեռ. Ս. Թ. թիւ 3235:

ԹՈՒՄԱՅ ՄԻՆԱՍՆԵՐ

(1390?–+ 1455)

Թումայ արեղայ յայտնի գրիչ, ծաղկող եւ կազմող էր միանգամայն: Մնած է ԺԴ. Դարի վերջերք: Որդին էր Սիմէոնի եւ Սրբունի: Աշակերտած է իր քեռիին՝ Թումա միայնակեցի: 2. Յակոբեան կը գրէ. «Մեզ չյաջողուեց պարզել թէ Թումա Մինասնեցը իր քեռու մօտ՝ միայն գրչութիւն է սովորել. թէ նաեւ նկարչութիւն» (Վասպուրականի Մանրանկարչութիւնը, Ա., էջ 104):

Թուման ապրած եւ գործած է Աղթամարի մէջ: Իր գրչական եւ մանրանկարչական գործունէութիւնը տեւած է աւելի քան երեսուն տարի (1420–1452): Այդ գործունէութեան արդիւնքէն կրնանք յիշել հետեւեալները:

1. — Աւետարան, 1420: Դրիչ եւ ծաղկող՝ Թումա Մինասնեց: Ստացող՝ Վարդան արեղայ. — Ձեռ. Երեւանի, թիւ 5514:

2. — Աւետարան, 1425: Դրիչ՝ Թումա Մինասնեց: Ծաղկող՝ իր հօրեղբորորդին Մկրտիչ կրօնաւոր: Ստացող՝ խաթուն. — Ձեռ. Երեւանի, թիւ 5542: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 345:

3. — Աւետարան, 1428: Դրիչ եւ ծաղկող՝ Թումա Մինասնեց: Ստացող՝ Արքահամ կրօնաւոր. — Ձեռ. Երեւանի, թիւ 6324: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թ. 400:

4. — Աւետարան, 1441: Դրիչ՝ Դանիէլ: Նկարիչ՝ Թումա Մինասնեց: Ստացող՝ Մկրտիչ տանուաւոր. — Ձեռ. Երեւանի, թ. 5515:

5. — Աւետարան, 1444: Դրիչ՝ Հայրապետ արեղայ՝ ծաղկողի քեռորդին: Ծաղկող եւ կազմող՝ Թումա Մինասնեց: Ստացող՝ Թումայ Դաւաղեցի, վաճառական. — Ձեռ. Երեւանի, թիւ 4629: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 637:

6. — Մաշտոց, 1445: Դրիչ՝ Թումա Մինասնեց: Ստացող՝ Յովաննէս կրօնաւոր Բրժոնց. — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 579:

7. — Դանձարան, 1445: Դրիչ, ծաղկող եւ ստացող՝ Թումա Մինասնեց. —

Ձեռ. Երեւանի, թիւ 5521: Յիշտ. Ժե. Դարի, Ա., թիւ 654:

8. — Աւետարան, 1447: Թումա Մինասնից գծագրած է «ձերարցեալ անձամբ եւ տկարացեալ մարմնով»։ Ստացող՝ Մովսէս Բին. Ուրանցի. — Ձեռ. Երեւանի, թ. 4438: Յիշտ. Ժե. Դարի, Ա., էջ 608:

9. — Նարեկ, 1452: Գրիչ՝ Թումա Մինասնից. — Յիշտ. Ժե. Դարի, Բ. Մասն, էջ 23:

Հ. Յակոբեան կր կարծէ թէ «Թումա Մինասնիցի համար նախատիպ են ծառայել Գլածորի մանրանկարչութեան դպրոցի մեծանուն նկարիչ Աւագի ատեղծագործութիւնները» (նոյն, էջ 107):

Իր տեսութեամբ «Ինչպէս պատկերագրութեան, այնպէս էլ ոճի տեսակէտից Թուման հիմնականում չընդունեց Աղթամարի վարպետների ընդունած ձեւերից» (նոյն, անդ):

ՔՐԻՍՏՈՍԱՏՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(1390 ? – 1460 ?)

Քրիստոսատուր Եպիսկոպոս ծնած է ԺԴ. Դարու վերջին տասնամյակին հաւանաբար: Որդին էր Յովհաննէսի: Կը յիշուի իբրեւ արեղայ 1417ին, իսկ 1449ին որպէս եպիսկոպոս եւ առաջնորդ՝ Կափայի մօտ նոր շինուած Երաշխաւոր Ս. Աստուածածին մենաստանին: Ան գրչութեամբ եւ մանրանկարչութեամբ պարապած է տասնեւհինգ տարի (1417–1432), առաւելապէս Կափայի մօտ Ս. Անտոնի վանքին մէջ: Մանօթ են իր գործերէն հետեւեալները:

(6)

1. — Նարեկ, 1417, Բեմհակի վանք (Ղրիմ): Գրիչ՝ Քրիստոսատուր կրօնաւոր: Ստացող՝ Մաղաքիա կուսակրօն քահանայ. — Յիշտ. Ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 222:

2. — Աւետարան, 1420, Ս. Անտոն (Կափա): Գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Քրիստոսատուր: Ստացող՝ պարոն Աստուածատուր. — Ձեռ. Երեւանի, թիւ 7686: Յիշտ. Ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 272:

3. — Շարակնոց, 1423, Ս. Աննա (Կափա): Գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Քրիստոսատուր արեղայ: Ստացող՝ Աւետիք կուսակրօն արեղայ. — Ձեռ. Փարիզի Ազգ. Մատենադարանի, թիւ 51: Յիշտ. Ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 416:

5. — Շարակնոց, 1429, Ս. Անտոնի վանք: Գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Քրիստոսատուր: Ստացող՝ Մարտիրոս կուսակրօն քահանայ. — Ձեռ. Փարիզի Ազգ. Մատենադարանի, թիւ 69: Յիշտ. Ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 425:

6. — Զաշոց, 1431, Ս. Անտոն: Գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Քրիստոսատուր, որդի Յովաննէսի. — Ձեռ. Երեւանի, թիւ 7434: Յիշտ. Ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 442:

7. — Բանք Զափաւ՝ Ն. Շնորհալոյ, 1432, Ս. Անտոն: Գրիչ՝ Քրիստոսատուր: Ստացող՝ պարոն Շամշատին, «ի վայելումն որդւոյն իւրոյ պարոն Խաչատուրի»։ — Ձեռ. Վիեննայի, թիւ 543: Յիշտ. Ժե. Դարի, Ա. Մասն, թիւ 463:

Հստ Հ. Յակոբբոս Տաշկանի՝ քաղմագոյն, գեղեցիկ եւ յաջող են ձեռագրիս լուսանցագործերն ու նկարները:

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

